

ՄԻ ԸՆՏՐԱՆԻ ԼԵՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Լեոն (Առաքել Բարախանյան) ծավալուն գրագրություն է ունեցել ժամանակի ճանաչված մտադորականների հետ: Այդ նամակներում նա քննարկել է պատմագիտական, բանասիրական և հասարակական հետաքրքրություն ներկայացնող շատ և շատ հարցեր, որոնց նշանակալից սասը այսօր էլ պահպանել է իր որոշակի գիտական արժեքը հայագիտության (և ոչ միայն հայագիտության) համար: Այդպիսիք են նաև ներկա տպագրվող նամակները: Դրանցից մեկում (փաստաթուղթ N° 1), օրինակ, Լեոն տեղեկացնում է Սինգապուրում հրատարակված «Իսթասեր» (1850—1851 թթ.) վիժատիպ պարբերականի մասին. հայ պարբերական մամուլի պատմության մեջ հիշյալ թերթի մասին դա առաջին հիշատակությունն է:

Նամակները տպագրվում են Երևանի Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Շիրվանզադեի ֆոնդ, № 456, Ե. Շահադիդի ֆոնդ, III ք., № 59—60, Ստ. Կառնյանի ֆոնդ, № 259, Ռ. Նավասարդյանի ֆոնդ, №№ 38—43):

ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

Իրֆիս, ապրիլի 14, 1902

Սիրելի Ներսես¹

Ամենից առաջ—շնորհավոր զատիկ:

Նամակիդ պատասխանը քիչ ուշացրի, սուները խանգարեցին: Այժմ շտապում եմ հալանել քեզ, որ Թաղիադյանի «Վեպ Վարսենկան»² տպված է Կալկաթայում 1847 թվին: Այս մասին դու կարող ես տեղեկություն ստանալ «Կենսագրություն Մեսրոպ Թաղիադյանց» գրքից³, հեղինակություն Մկրյան քահանայի, Թիֆլիսում տպված 1886-ին: Այդտեղ էլ (երես 157) դու կգտնես այն առաջաբանը, որ արտագրել ես նամակիդ մեջ: Ուրեմն գրադարանում հղածը արտագրություն է տպածից:

Բայց այն հանգամանքը, որ վեպը մի անգամ տպված է եղել, չի պակասեցնում այն հետաքրքրությունը, որ ունի այդ գիրքը: Թաղիադյանի գրվածքներն ու հրատարակությունները առհասարակ շատ հազվագյուտ են, «Վարսենիկը» չկա այստեղ, Ներսիսյան դպրոցում (որի գրադարանը կարելի է համարել ամենահարուստը Թիֆլիսում): Ինձ մանավանդ շատ հետաքրքրեցին քո այն խոսքերը, թե «Վարսենիկի» և «Անահիտի» մեջ նմանություն կա: Աղայանցի հոբելյանի առիթով ես կամենում եմ մի փոքրիկ ուսումնասիրություն դրել նրա գրվածքների մասին⁴, ինձ շատ կպարտավորեցնեք, եթե կամ գրադարանում եղած ձեռագիրը ուղարկեք ինձ կարգալու, կամ, որ ավելի լավ կլինի, արտագրել տայիք ինձ համար մի հատ: Մոտիկ ապագայում էլ ինձ հարկավոր է լինելու այդ գիրքը: Թաղիադյանցի մյուս վեպը, որի անունն է «Վեպ Վարդգեսի տեառն տուհաց»⁵, ես ձեռք եմ բերել, մնում է այդ մեկը: Ես ուզում եմ գրել խաչատուր Աբովյանի կենսագրությունը, որի մեջ պիտի դնեմ հայկական վեպի պատմությունը, հետզհետե ձեռք եմ բերում Վենետիկում, Վիեննայում, Կ. Պոլսում և Զմյուռնիայում տպված վեպերը: Իհարկե,

այնպիսիները, որոնք այժմ կարելի է ձեռք բերել փողով: «Վարսենիկը», ինչպես ասացի, չի ճարվում, գոնե ես մինչև այժմ չեմ տեսել: Եվ եթե կարողացա ունենալ և այդ անդրանիկ վիպական գրվածքը քո օգնությամբ, շատ շնորհակալ կլինեմ:

Գալով Թաղիադյանին, ես էլ կասեմ որ, այո, դա մի խոշոր գրական դեմք է և ես ուրախությամբ կգբաղվեի նրանով: Դժբախտաբար, ես չունեմ նրա բոլոր գրքերը: Հարկավոր է ունենալ մանավանդ նրա «Ազգասեր» շաբաթաթերթը (1845—1852), որ հրատարակվում էր Կալկաթայում: «Ազգասերի» միայն երկու տարին ունիմ, ես դիմեցի Նոր Զուղա, ուր վաճառում են մյուս տարիները, պատասխանեցին թե տարեկան օրինակը արժե 10 ռուբլի: Որտեղից տամ այդքան փողը: Առհասարակ ինձ սաստիկ նեղում է այն, որ կարելի չի լինում գրքեր գտնել: Կասեմ քեզ, որ այս կողմից շատ ողորմելի ազգ ենք: Թիֆլիսի պես մի քաղաքում չկա փոքր ի շատե հարուստ մի հայկական գրադարան: Ոչ ոք չէ մտածում հայերեն գրքերի մի հավաքածու կազմել, մասնավոր մարդիկ չեն կարող այս բանն անել, իսկ ընկերական նախաձեռնություն չկա: Դու կապչես, տեսնելով այստեղի գրական աղքատությունը, ամեն ինչ պետք է առնել, բայց որտեղից առնել և ինչպե՞ս: Ես կարծում էի. թե իմ ջանքերով կարող եմ գտնել այն ամենը, ինչ հարկավոր է: Վեց տարի է շարունակ առնում եմ գրքեր, ունենալով ընդամենը 100 ռուբլի ամսական ռոճիկ, ամեն կերպ զրկել եմ ընտանիքիս, բայց և այնպես տեսնում եմ, որ ինձ համար անկարելի է ձեռք բերել գոնե ամենակարևորները:

Սա մի պակասություն է, որի մասին արժե մտածել և այս կարևոր հարցը ես քեզ եմ հանձնարարում, իմանալով, թե դու տարիների ընթացքում որքան ես աշխատել Բագվի գրադարանի համար: Թիֆլիսում չի աչողվում, գոնե Բագվում կազմվեր մի կենտրոնական գրադարան: Ձեր գրադարանը, փառք աստծու, միջոցներ ունի և ինձ թվում է, որ ձեզ համար դժվար չի լինի այդ պակասը լրացնել, եթե վարչությունը կամենա իր ուշադրությունը կենտրոնացնել գլխավորապես հայերեն գրքեր հավաքելու վրա: Շատ և շատ անհրաժեշտ է մանավանդ մեր պարբերական հրատարակությունները հավաքել, այդտեղ է մեր ամբողջ պատմությունը, մեր գրականությունը: Ես այդտեղ ժամանակ այդ հարցը կար և դնողը դու էիր. չգիտեմ մինչև այժմ ինչ ես ավելացրել: Շատ անգամ եմ ուզեցել գալ Բագու, գրադարանում որոնել իմ ուզածը, բայց վախեցել եմ, որ ճանապարհածախսը զուր կկորչի: Խնդրեմ, ուղարկիր ինձ, եթե կարելի է, գրադարանի լիակատար ցուցակը.— ես պատրաստ եմ ոչ միայն Բագու ճանապարհորդել, այլև ավելի հեռավոր տեղեր, միայն թե կարողանամ մի բան գտնել. երկու տարի առաջ հատկապես այս նպատակով գնացի Շուշի, տեսա մի քանի տնային գրադարաններ, բոլորը անխնամ թափթփված, թողի տակ կորած: Մախում են, կարելի է էժան էլ առնել, բայց ես, իհարկե, չկարողացա առնել, քանի որ պարապեցի, նկատողություններ վերցրի և վերադարձա: Ինչ կլինեի, եթե այդ գրադարանները կարողանայիր հավաքել Բագվում: Քո ուշադրությունն եմ հրավիրում նաև Երիցյանի՞ գրադարանի վրա: Մախում են, թանկագին բաներ շատ կան, ո՞վ գիտե, ո՞ւմ ձեռքը կընկնեն: Բայց հարկավոր է այնպես անել, որ ինձ նման տկար մարդիկ էլ կարողանան օգտվել այդ բաներից: Մի ուրիշ օրինակ էլ բերեմ: Այստեղ կա ոմն Ավետիք Եղբաճյան, մի հին գալլ, որ կարող է խաբել բոլոր սատանաներին: Նրա մոտ գտնվում են հին հայերեն լրագրերի

ժողովածուներ—կիսատ-պռատ են, ճիշտ է, բայց էլի արժեքավոր են, ուզում եմ առնել, ամբողջ երեք ամիս է շշտա եմ թակում», բայց 70 ռուբլի է ուզում և ես չեմ կարողանում առնել: Կա այդ ժողովածուի մեջ մի շատ հազվագյուտ բան—Սինդալուցի «Բանասերը» (1850—1851), վիմագրած մի լրագիր, որ կարող է գրադարանի զարդ դառնալ: Արժե 15 ռուբլի: Խորհուրդ կտայի առնել, եթե, իհարկե, ուզում ես ժողովածու կազմել: Դու ուզում էիր «Բազմավերսի» բոլոր տարիները բերել տալ, ի՞նչ եղավ, առձեռն ես, թե ոչ:

Ահա, սիրելի ներսես, մի շատ կարևոր, մեծ գործ, որին եթե նվիրվես, ահագին ծառայություն կմատուցանես մեր գրականությանը:

Խոսեցի իմ ցավի մասին, և խոսքիս էլ վերջ չկա: Բայց գրեցի քեզ, որովհետև դիտեմ, որ դու էլ սիրում ես դիրքը, ուզում ես, որ ունենանք մի հարուստ գրադարան: Ուրեմն, ի նկատի ունեցիր գրածներս, եթե հարկավոր լինի իմ օգնությունը, ես ամեն ժամանակ պատրաստ եմ: Ընդունիր սիրալիր ողջուններս, բարեկիր իմ կողմից Ալեքսանդրին⁷ և բժ. Զալյանցին:

Քն Ա. Բաբախանյան

2

Թիֆլիս, ապրիլի 11, 1910

Մեծապատիվ պարոն Ե. Շահագիր

Ներեցեք, որ ուշ եմ պատասխանում Ձեր նամակին: Որքան հիշում եմ «Կ. Վրուլը», ճիշտ որ, խոստացել էր տալ հայոց թատրոնի պատմությունը և խմբագրությունը ինձ պիտի հանձնվեր: Բայց հետո թողեց այդ միտքը, չգիտեմ ինչ պատճառով: Ես հրատարակության գործի մեջ ոչինչ մասնակցություն չեմ ունեցել և չէի կարող ունենալ, քանի որ հիվանդ պառկած էի: Տեղեկություն չունեմ նույնիսկ՝ բացա՞ծ է եղել բաժանորդագրություն, թե ոչ:

Խորին հարգանքներով

Ա. Բաբախանյան

3

Թիֆլիս, մարտի 21, 1912

Հարգելի բարեկամ

պ. Կանայան¹

Ձեր նամակին պատասխանել ժամանակին թույլ չտվեց իմ ախտա, ոչ մի հանգիստ չտվող «ղազեթաշխությունը»: Սպասում էի, որ մի երկու օր տոն լինի, որպեսզի կարողանամ զբաղվել Ձեր առաջարկած հարցով: Ահա, վերջապես, միջոց ունեցա նայելու գրքերին և հաճությամբ կատարում եմ Ձեր ցանկությունը, հայտնելով նախապես իմ ուրախությունը Ձեր սկսած գործի համար:

Արդ, մեղացիների լեզվի հարցը երկար ժամանակ գիտնականների կողմից լուսաբանվում էր այն մտքով, թե դա արիական լեզու չէր, այլ թուրանական, ինչպես, օրինակ, ապացուցում էր J. Oppert-ը իր «Le peuple et la langue des Mèdes» աշխատության մեջ (Paris, 1872). սակայն հետո ապա-

ցուցվեց հակառակը, այսինքն՝ թե մեր մեղացիների լեզուն զուտ արիական, իրանական ճյուղին պատկանող <է> (A. Delatre S. J.—„Le Peuple et l'Empire des Mèdes“, Bruxelles, 1883).

Որ քրդերը մեղական ցեղերից մեկն են, այս մասին հաստատ կարծիք հայտնել է դեռ 1868 թվին François Bernard Chamoy-ն իր „Chèref Nâneh ou iactes de la nation Kourde par Chèref-ou' oldine“ եռահատոր աշխատության առաջին հատորի մեջ (թթ. 300—310): Այս զրբից կարծեմ կա էջմիածնում: Այնուհետև՝ դր Մորդանը², Շոշի պեղումների ժամանակ, ուսումնասիրել է հյուսիսային Պարսկաստանի լեզուները, դրանց մեջ և քրդական զանազան բարբառներ, որոնց նվիրել է իր հոյակապ աշխատության ամբողջ հինգերորդ հատորը: Այստեղից ես բերում եմ հետևյալ կտորը, որ կարող է օգտակար լինել Ձեզ.

«Հայաստանից արևելք և հարավ-արևելք՝ Կուրից (Cyrus) հյուսիս, մինչև Իսպահան (հարավ), տարածված էր Միդիան: Այդ երկիրը Հայաստանի նման բաժանված էր երկու նահանգների՝ Մեծ Միդիա՝ հարավում և Ատրպատական Միդիան հյուսիսում: Ատրպատական Միդիան ընկած էր Հայաստանի (Թուրքիայի այժմյան սահմանը, Արարատից հարավ) և Կասպից ծովի միջև, որն իր մեջ ընդգրկում էր Ուրմիա լճի ավազանը, Սեֆիդ ուղիի ու Արաքսի հովիտները, Թալիշի ու Գիլանի սահմանները: Մեծ Միդիան իր մեջ ընդգրկում էր էլբորուսից հարավ ընկած երկրները, Պարսկական սարահարթի արևմտյան մասը մինչև Ասորեստան (դեպի արևմուտք) և Պարսկաստանը (Պերսեպոլիս)՝ դեպի հարավ:

Այժմ Միդիայի այդ երկրները (Ատրպատականը և Մագնորը), որոնք հնում մինչ պարսկական գերիշխանության ժամանակաշրջանը կարևոր դեր են խաղացել, այժմ գրեթե ամբողջովին բնակեցված են քրդերով ու թուրքերով:

Թուրքերը, ինչպես գիտենք, այդ երկրում ավելի ուշ ծագում ունեն, ուստի և հին Միդիայում ժողովուրդների հետքեր փնտրելիս նկատի չպետք է ունենանք նրանց գոյությունը: Պարսիկների թիվը միդիական հողում այնքան էլ շատ չէ, նույնիսկ այսօր էլ, և՛ դրանց ներկայությունը բացատրվում է իրանական բոլոր երկրների վրա քաղաքականապես իշխող լեզվով:

Այժմ խոսենք ներկայիս քրդերի մասին, որոնք կազմում են երկրի բնակչության հիմնական մասը և երբեմնի հզոր միդիացիների մասին, որոնք ամբողջովին վերացան: Արդյոք նպատակահարմար չի՞ լինի ենթադրել, որ միդիական ցեղի մնացորդները ոչնչացվել են լեռներում նախ և առաջ պարսիկների ասպատակությունների հետևանքով, հետո էլ՝ թուրքերի, իսկ մեր օրերի քրդերը հանդիսանում են նրանցից սերվող շառավիղներ:

Դժբախտաբար, միդիացիների լեզվի վերաբերյալ մեր ունեցած փաստաթղթերը չնչին կարևորություն ունեն, լինեն դրանք թե՛ դասական հեղինակների ժառանգություններ, թե՛ ասորական բնագրեր:

... Միդիացիների անունը անհայտանում է արեմենյան տիրապետության միջին ժամանակներում և հենց այդ ժամանակվանից էլ ի հայտ են գալիս Carduchi, Gordiel, Curtil, Cordueni և Cardaces անունները, որոնցից մի քանիսի մեջ մենք անպայման տեսնում ենք քրդերին*:

* Ֆրանսերեն բնագիրը տե՛ս „Mission scientifique en Perse“, tome V, Etudes linguistiques, Paris, 1904, pp. 5—6.

Նույն հեղինակն իր վերջին ստվար աշխատության մեջ (J. de Morgan, „Les premières civilisations“, Paris, 1909) արդեն առանց վերապահումների ասում է. «Այս երկու լեզուների կողքին (գենդերեն և պարսկերեն) եղել են այլ լեզուներ, որոնք երբևէ դրված չեն եղել և դրանցից մեզ գրեթե ոչինչ չի հասել, Դրանք են. ժամանակակից քրդերենի ձևափոխված միդիերենը և օսերենը, որով խոսել է մեծ Կովկասի կենտրոնական մասում կորստյան մատնված մի ժողովուրդ»^{**}:

... Ահա այն բոլորը ինչ կարող եմ տալ Ձեզ իմ գրադարանից: Հետաքրքրական է թե մեր «մար» անունը ինչ ծագում ունի: Դեռ անցյալ դարում կային հայ դրողներ, որոնք քրդերին անվանում էին «ազգ մարաց» (օր. Սրվանձատյանի «Հնոց-նորոցի» մեջ): Արդյոք հետևել եք, թե որ ժամանակից է մեր գրականության մեջ սկսվում այս անունը իբր սեփական բուրգ ցեղին: Համենայն դեպս հիշելի է, որ առանց կրակի ծուխ չի լինում:

Քրդական հարցը հայության շրխքին կապված մի շատ նշանավոր իրականություն է մեր պատմության սկզբից: Մի հարց, սակայն, որ մուժ է, շուտումնասիրված: Իս լիահույս եմ, որ Ձեր ուսումնասիրությունը լույս կմտցնի այս մուժ աշխարհի մեջ: Հետաքրքրական է՝ դոնե անցողաբար շոշափե՞լ եք և այն ավանդությունը, թե՝ քրդական մի քանի ցեղեր հայ նախարարությունից են առաջացած: Այս մասին մի քանի մուժ ակնարկություններ կարելի է գտնել Շերև-ադդինի քրդական պատմության մեջ: 1910-ին լսեցի որ Խարբերդի «Եփրատ» սյարբերականի մեջ մի ամբողջ ուսումնասիրություն կա տպված այս մասին, բայց չկարողացա ձեռք բերել:

Իմ բարենները Մանուկին³ և հ. Գալուստին¹: Ասացեք հ. Գալուստին, որ ծուլացել է, երևի ծերությունը հաղթում է: Ինքը կիմանա, թե ինչ եմ ակնարկում:

Հարգանքով և բարեններով Ա. Բաբախանյան

4

Թիֆլիս, ապրիլի 19, 1930,
Բելինսկայա 18

Սիրելի Ստեփան

Ապրիլի 3—15-ի նամակդ ստացա այսօր, պատասխանում եմ իսկույն, թեև զլուխս սաստիկ խառնված է, վասն զի Գրիշան¹ պառկած է հիվանդանոցում և սլիտի օպերացիայի ենթարկվի (ապենդիցիդ):

Լավ է, որ թույլ են տվել Ավդալբեկյանին² պաշտոնավարել: Հայտնի ինքն իմ գոհունակությունն ու շնորհավորանքը: Բայց վախենում եմ, որ նրա գլուտը Արաբսի հին հունի մասին հին նորություն դառնա: Խաչիկ վարդապետը³ վաղուց է այդ մասին բղավում, ճաք ճաք լինում, բայց որովհետև ընդունված է չհավատալ նրան, ուստի և ուշադրություն չեն դարձրել նրա վրա: Որքան հիշում եմ, Արաբսի հին հունը նա բերում մոտեցնում է Վաղարշապատին և Արտաշատն էլ տեղափոխում է կարծեմ հենց այդտեղ, այժմյան Արտաշատը համարելով, թե Դվինն է: Լավ միտս չէ՝ Մեծամորը նա Զանգուն է համարում, թե Սև ջուրը: Համենայն դեպս, մարդը որոնումներ և ապացույցներ ունի այս հարցի շուրջը և պետք է նրան էլ հարցնել:

^{**} Նույն տեղում, էջ 333:

Օգուտ բաղելով այն հանգամանքից, որ Ստրաբոնի XI գիրքը բավական քրքրված է, ես նամակիս ծոցում ուղարկում եմ քեզ երկու թերթիկ. ուր խոսքը Արտաշատի մասին է: Խնդրեմ լավ պահես, որ ինձ տաս կազմելու համար: Ի դեպ ուսներեն Ստրաբոն կա համալսարանում, ես ունեցել եմ նրան. մոտս պիտի լինի և Երվանդ Շահազիզի մոտ, լալայանցի գրադարանում եղել է:

Որդուս պատճառով չեմ կարող շուտ գալ, կգամ, երևի, մայիսի երկրորդ կեսում և կբերեմ իմ զեկուցումը: Երևի՜ քոնն էլ կձգվի մինչև այն ժամանակ:

Հաղորդում եմ Ստրաբոնի ֆրանսերեն վերնագիրը՝ „Géographie de Strabon“, t. II, Paris—Hachette, 1894.

Բարևներով քո Ա. Բաբախանյան

5

Երևան, մայիսի 8. 1925

Սիրելի Բագրամ!

Ձեր երկրորդ նամակն ստացա և կարդացի մեծ ախորժանք: Գրեթե մի ամբողջ ժամ ես Ձեր գրած տողերի միջից լսում էի Ձեր զվարթ, ազդու ձայնը, դուք ինձ հետ խոսում էիք Թիֆլիսից այնպես համեղ ու քաղցր, ինչպես խոսում էիք Թիֆլիսում, հիվանդանոցում, Կամոյի փողոցում, Ձեր վարդերի դրախտում: Գիտեք արդեն որքան սիրով և ախորժանքով եմ միշտ ունկնդրել Ձեր խոսքին, Ձեր արարատյան սրտի հրաբուրբ զեղումներին, Ձեր երկար կյանքի հուշերին ու հիշատակներին, Ձեր մեղմահույզ ծիծաղին և՛ շանթող, և՛ հաղթ բարկությանը:

Այդ բոլորը ես գտա Ձեր նամակի մեջ, որ ցուցրել է իր մեջ Ձեր ամբողջ ներքին աշխարհը, Ձեր գաղափարական խառնվածքը: Ի՞նչ կարող եմ ասել, եթե ոչ շնորհակալություն հայտնել, որ Ձեր մեծ աշխատավորական ժամերից խլել եք այդքան ժամանակ՝ Ձեր վաղեմի բարեկամի տխուր մենակության օրերը ախորժելի զգացմունքներով զարդարելու համար: Առանց իմ ասելու էլ դուք շատ լավ գիտեք, թե ներկա ժամանակում, երբ մենք արդեն անցած սերունդ, պատմություն ենք դարձել, որքան սիրելի է ապրել մեծ ժամանակների՝ այսինքն անցյալ ժամանակների, հիշատակներով: Ժամանակի անխնա մահազաղը հնձել է մեր սերնդակիցներից ամբողջ լեզեռներ, մնացել ենք քչվորներս, մի քանի հոգիներ, նավաբեկությունից պատահաբար ազատվողներ, որ դեռ տարվում ենք կատաղի ալիքների վրա մի-մի փոքրիկ տախտակ հեծած, որ մուրացել ենք կյանքից՝ պատրաստ ամեն ինչի անդունդների մեջ անհայտանալու: Մենք, այսպես մնացածներս ենք, որ կարող ենք իրար հասկանալ, իրար զնահատել, իրար սիրել: Եվ դուք լավ հոգեբան եք եղել: Ըմբռնելով, թե որքան պիտի ուրախացնեք ինձ Ձեր պարզ ու վճիտ հայ խոսքով, Ձեր պատմելու աննման եղանակով: Այս բոլորի համար, ես կրկնում եմ, միայն շնորհակալ կարող եմ լինել, բարեմաղթելով, որ Ձեր արարատյան սիրտը դեռ երկար հարատևի իր հմայիչ թարմության, կորովի ու բյուրեղային հատկության մեջ:

Արձագանքել կուզեի Ձեր բոլոր խոհերին ու առաջադրած խնդիրներին: Բայց որովհետև արդեն շատ քիչ բան մնաց մինչև իմ Թիֆլիս գալը, գուցե մի երեք շաբթից ոչ ավելի, ուստի ավելի <լավ> համարեցի պահել իմ ասելիքները մինչև որ անձամբ կտեսնվենք իրար հետ, կխոսենք:

Առ այժմ օգտվում եմ այն հանգամանքից, որ մեր լուսիկը արձակուրդով գալիս է Թիֆլիս, դրում եմ այս երկտողը և հանձնարարում եմ նրան անձամբ բերել Ձեզ այս նամակը և բերանացի էլ հայտնել իմ անթիվ բարենները և ամենավառ ցանկությունները:

Ջերմագին համբույրներով

Ձեր Լեո

2. Գ. Տիգրան Նազարյանցին² այստեղ պաշտոն չտվին, բայց նշանակեցին կենսաթոշակ ամիսը 50 ռուբլի:

6

Երևան, դեկտեմբերի 30, 1926,
улица Ленина

Սիրելի Բախրատ

Ես Ձեզ չեմ պատժել, դուք եք Ձեզ պատժել: Իմ մեղքը միայն այն է Լեզի, որ տվել եմ Ձեզ այն, ինչ դուք գրել եք ցուցակի մեջ: Ուստի, եթե այդ մի պատիժ է (որ, իհարկե, իսկի էլ այդպես չէ), դուք պետք է սիրով տանեք, մեկ էլ այն, որ այդ ընթերցումով դուք կարող եք լավ կշռադատել, թե հապա Լ^{ու}ս որքան ու որքան եմ ինձ պատժել կյանքիս մեջ: Ոչ, սիրելի բժշկապետ, եթե այդ պատիժ էլ է, լավ պատիժ է: Եվ ես մեծ հաճությամբ մտածում եմ, թե այդ պատիժը, որ դուք եք քաշում հոժարակամ, որքան հետաքրքրական նյութեր պիտի մտցնե մեր ապագա քաղցր խոսակցությունների մեջ, երբ ես, եթե ողջ մնացի կգամ Թիֆլիս, հուսով եմ այս անգամ այլևս առանց այստեղ Լերբեք վերադառնալու մտքի:

Շատ ճիշտ եք ասում, իմ աչքերին բոլորովին վայել չէր այս աշխատանքը, որ ես վերցրել եմ ուղղագրական հանձնաժողովում: Բայց անկասկած եմ, որ դուք միաժամանակ և շատ լավ հասկացել եք, թե ինչն է ստիպել ինձ այդպիսի գործ հանձն առնել: Աշխատել եմ վրան երկու ամիս, բայց եթե 60—70 ռուբլի ստանամ, շատ շնորհակալ կլինեմ:

Ձեր 3-ի մասին ես խոսել եմ, խոսել է և Մալխասյանը², բայց ամենից մեծ եռանդով այդ արտասանությունը պաշտպանել է երիտասարդ լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, աշտարակցի է, Մառի աշակերտ, շատ լուրջ և լավատեղյակ մասնագետ: Այս երկրորդ դեպքն է, որ Ղարաբաղը տալիս է Աշտարակին հայտնի գործիչներ—մեկը Պերճ Պողոսյանն էր, մյուսը՝ այս երիտասարդ գիտնականը (դասախոսում է մեր համալսարանում), որի Ղափանցյան ազգանունը որոշ ապացույց է, որ նրա նախնիները Ղափանից են եկել Աշտարակ: Սեր ուղղագրական պարապմունքները դեռ շարունակվում են և, ինչպես երևում է, Աբեղյանի նորամուծությունից շատերը կջնջվեն:

Հա՛, այն էի ասում, որ թեև իմ աչքերի բանը չէր աշխատանքս, բայց «ոչ միայն բանիւ կեցցէ մարդ, այլև հացիւ»: Մեկ էլ այն, որ աչքերիս բանը պրծած է և ռուսի խոսքն իմաստուն է «снявшие голову волосам не плачут».

Իայց այս նամակը ես գրում եմ ոչ թե այս տեսակ բաների համար: Գլխավոր նպատակս է, թեև անշնորհքի պես գցեցի վերջին—շնորհավորել

Ձեր նոր տարին: Շնորհավորում եմ այո, առանձնապես շատ եմ շնորհավորում, որովհետև այն թվականը, որ վաղը չէ մյուս օրը կդառնա աշխարհի տերը, հասարակ թվական չէ: Նա 50-դն է 1877-ից հետո, իսկ 1877-ը... պատերազմ, Ալաշկերտի գաղթականություն, նորավարտ բժիշկ նավասարդյան:

Որքան բան պիտի տված լինեիք դուք ապագային, եթե գրեիք Ձեր հասարակական-գրական հիշողությունները:

Բայց գիտեմ, որ անհուսալի բան եք հայտարարելու այս ցանկությունը: Ջերմագին ողջունենք ձերոնց և Ձեզ:

Ձեր Բաբախանյան

7

Երևան, մարտի 25, 1927

Սիրելի բժշկապետ

Կարծում էի, թե նամակս կորել է, բայց կասկածս վարատվեց երեկ, երբ ստացա համով, հոտով, ախորժով, ավյունով գրած նամակդ, կարդացի, ուխա՛յ, ասացի, բերանս, ինչպես մեր ժողովուրդն է ասում, ջրով լցվեց:

Պատասխանում եմ, բայց կարգով, ինչպես դուք եք արել, կես առ կես:

1. Ուղղագրության հարցը գրեթե վճռված վերջացած է մեր հանձնաժողովի կողմից: Մեսրոպյան մեծ ժառանգությունը, գրեթե ամբողջությամբ վերականգնված է: Միայն է-ն և յ-ն չեն վերականգնվում, այլ և ուրիշ շատ բաներ: Ձեզ ուղարկում եմ տպագրված թեզիսները, որոնց մեծագույն մասն ընդունված է քվեարկությամբ: Մանրամասնությունները կարող եք իմանալ Մալխասյանից:

Գրիգոր Ղափանցյանի մասին գրածդ ամենահարազատությամբ հայտնեցի իրան: Նա համաձայն է թե՛ ինձ հետ (այսինքն, որ իր նախնիները Ղափանից են եկել) և թե՛ Ձեզ հետ (վերաբերմամբ արարատյան օդով): Շատ շնորհակալություն հայտնեց Ձեր ողջունի համար և ինքն էլ փոխադարձաբար Ձեզ է ողջունում: Ձեզ անձամբ չի ճանաչում, բայց Ձեր անունն, իհարկե, լսել է:

2. Իմ 50-ամյա հոբելյանի մասին այստեղ մինչև այժմ ոչ ոք ձեռն ու ծպտուն էլ չի հանել: Ես ոչինչ ակնկալություն չունիմ այստեղի մթնոլորտից... Մտադիր եմ վերջինը դարձնել այս տարին, եթե ինձ, իբրև КНВАЛНД ТРУДА, կենսաթոշակ տան: Ձեզանից է միայն, որ ահա առաջին անգամ շնորհավորություն լսեցի հոբելյանիս առիթով: Թող կարծեն, թե 50 տարի աշխատելը ճիշտ է և անարժեք բան, մենք իրար լավ ենք հասկանում: Բյուր շնորհակալություն շնորհավորանքիդ համար: Շնորհավորում եմ և ես Ձեզ, համբուրում եմ Ձեր պլյաժառ արիական ճակատը, որ այնպես լավ գիտե արհամարհել իրան բախվող փոթորիկները...

3. Հենց դրա մի մեծ ապացույց.— Հաղբատի և Սանահինի վերանորոգության հարցը: Սանահինը ես մի կողմ եմ թողնում, որովհետև, իբրև ճարտարապետական հուշարձան, նա այնքան նշանավոր չէ: Ուրիշ բան է Հաղբատը: 1912 թվականի ամառը ես տեսա նրան և սքանչացի: Բովանդակ Հայաստանի հնությունների թագ ու պարծանքը, մի միակ ամբողջ մնացած ունիկում, որի նմանն Անին անգամ չի տալիս: Դեռ այն ժամանակ երևում էր, որ այդ սքանչելիքը շատ է մոտեցել քանդման վիճակին: Հիմա ասեմ Ձեզ, սի-

րևի բժշկապետ, որ եթե այսօր Հաղթատի քանդումն անխուսափելի է դարձել, դրա պատճառը պիտի համարվի... Մեսրոպ հպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Որք նա այն տարին առաջնորդ եկավ Թիֆլիս, ես հենց առաջին օրը երևեցի, փառավոր ընդունելությունից հետո, երբ նստած էինք իբրև մտերիմներ առանձնացած (բացի երկուսիցս կար նաև Հովհաննես Թումանյանը), նրան ասացի. «սրբազան, վարչական գործերում Դուք, միևնույն է, չպիտի կարողանաք աստղեր իջեցնել երկնքից, բայց Ձեզ համար ճշմարիտ փառք կարող եք ստեղծել Հաղթատը վերանորոգելով»: Նա մեզ ասաց, թե իր առաջին և ամենադիսավոր գործն այդ է լինելու: Այն ժամանակ չափազանց հեշտ էր այդ բանն իրագործել, սիրելի բժշկապետ, այս չափազանց պարզ է: Մասնաժողով էլ կարգվեց, Արամյանն իբրև կալվածատեր, խոշոր գեր կարող էր կատարել: Բայց հայ ազգի դժբախտությունից՝ Մեսրոպը շատ շուտով մոռացավ, որ ինքը իր թե մասնագետ հնագետ է, Թիֆլիսի առաջնորդ, կամեցավ դառնալ հայկական Բիսմարկ, չհասկանալով երբեք, որ Բիսմարկը ծտի խելք չուներ, և տարավ հայությունը Վորոնցով-Դաշկովի ոտները, այստեղից գնացի կամավորական շարժում և այնտեղից էլ դեպի կատարյալ կործանում: Հաղթատը մոռացվեց, նվ երբ ես այդ հայկական բիսմարկության անցողակի. թևեր պատմությունն արի իմ «Անցյալից»-ի մեջ, նա ինձանից խռովեց, այսինքն արավ մեծագույն պատիվ ինձ, և հիմա գնացել է նույն ծտային ուղեղով բարեբարելու Ջուղայի և Հնդկաստանի հայությունը...

Հիմա Դուք հույսը դրել եք այստեղի մի հիմնարկության վրա, որ կրում է Հնության պաշտպանության հանձնաժողով անունը: Կոմիտեի գիտական քարտուղարը Աշխարհբեգ Քալանթարն է, որի հետ այսօր պիտի հանդիպեմ ժողովում: Կիսոսեմ նաև Գարեգին Լևոնյանի հետ, որ մեր ուղղագրական հանձնաժողովի քարտուղարն է և միշտ իմ կողքին է նստում:

4. Մառին (Նիկոլայ Յակովլևիչ) եթե նամակ գրելու լինեք առհասարակ որևէ առիթով, կարող եք գրել հայերեն, նա ինքն էլ նամակներ է գրում հայերեն լեզվով: Ինչ վերաբերվում է Անիին, ես, իհարկե, միանգամայն հասկանում եմ և հաղթելով հարգում եմ հայրենասեր սրտիդ տենչերն ու իղձերը: Բայց զոհեմ ես ինքս կղժվարանայի մի այդպիսի դիմում անել հարգելի գիտնականին, քանի որ դրանով կգնեի նրան մի դժվար կացության մեջ... Նկատի առնեք, որ Կարսի դաշնադրության ժամանակ (1921-ին) ռուսաց ներկայացուցիչների կողմից առաջարկություն է եղել, որ Անին թողնվի Հայաստանին, իբրև հնագիտական մի կենտրոն, բայց թուրքերը լսել անգամ չեն ուզեցել այդ մասին: Ոչինչ չի կարելի անել և այստեղ: Սահմանագիծը փոխված է այնպես, որ Երևանում անհնարին է լինում որևէ լուր առնել Իզդիրից: Ես տեղեկություններ կհավաքեմ Աշխարհբեգից Անիի մասին և հետո միայն կարող եմ օգտակար մի բան անել, կավ չէի՞ք համարի հետաձգել այդ հարցը մինչև իմ գալը:

Եթե առանձին արգելք չպատահի և ինքս էլ ողջ մնամ, հունիսի սկզբին այդտեղ կլինեմ:

5. 1863-ից հետո «Կոունկ հայոց աշխարհի» չի եղել, որպեսզի մատակարարեմ Ձեզ: Պատմությունը այդպես է: Վերջացնելով 1863 թվականը, Մարկոս Աղաբեգյանը² գնում է Կ. Պոլիս, իսկ «Կոունկի» հրատարակիչ Համբարձում էնֆիաճյանը ծախում է Մոսկվայից նոր եկած Ստեփանոս (հետո քո խորեն) Ստեփանին, որ չափազանց զրաբար գտնելով «Կոունկ հայոց աշխարհ» 2—7

խարհիս վերնադիրը, աշխարհաբարացնում է նրան, դարձնելով «Հայկական աշխարհի կռուին» և այս վերնագրով էլ հրատարակում է մի տարի, 1865-ին, որից հետո ավելորդ է համարում «Կռուին» անունը ու մնում է միայն «Հայկական աշխարհ»։ Այնպես, որ «Կռուին» շարունակությունը Թիֆլիսում «Հայկական աշխարհ» է։ Այդ ամսագրի մի քանի տարիները կար իմ գրադարանում, բայց չեմ կարծում, որ հետաքրքրվեք նրանցով, շատ են ողորմելի։ Բայց «Կռուին» ունենում է շարունակություն և Կ. Պոլսում՝ Մարկոս Աղաբեգյանը սկսում է 1866 թ. «Միլն Ավարայրի» ամսագիրը, որ մի տարի է ապրում։ Այդ տարին դուք կարդացել եք։ Այնուհետև, Մարկոս Աղաբեգյանն ունի մի աշխատություն տպված Կ. Պոլսում, 1879-ին՝ «Թուղթ առ երիցս երանյալ Ներսես պատրիարք Վարժապետյան հայոց ազգին և եկեղեցու վրա» վերնագրով։ Եթե կամենաք կարդալ այս շարադրությունն էլ, ես կտամ Ձեզ իմ գալուց հետո։ Այդ ի՞նչ անգլիացու հայացք է հայոց պատմության մասին։ Անշուշտ այդ բանը կարդացել եք «Կռուին» մեջ, ուր իբր թե գրագրություն ունեն իրար հետ Նելսոն և Վուտ անգլիացիները հայերի մասին։ Բայց դրանք իսկապես անգլիական նամակներ չեն, Մատթեոս Մամուրյանն³ է այդպիսի ձևի տակ իր սեփական հայացքները հայտնել։

«Կռուին» մեջ տպվածը այդ նամակների մի մասն է⁴, ամբողջ <ը> մի բավական հաստ հատոր⁵, հրատարակված է Ջմյուռնիայում և ես էլ ունիմ իմ գրադարանում։

6. Մեր խեղճ, ճիշտ որ կրթաբաղադրացի Տիգրանի⁶ համար պատրաստ եմ անել ինչ կարող եմ։ Դնում եմ ինձ Ձեր տրամադրության տակ...

7. Բարեգործական ընկերության վերջին տասնամյակի պատմության համար արած առաջարկդ միանգամայն անհուսալի է։ Այդ տասնամյակի վերաբերյալ արխիվն ավելի մոլթ է, քան նախընթաց 30 տարիները։ Եվ ո՞վ կտա գործերի այդ ահագին բեռը, որ տանենք Թիֆլիս՝ վերադարձնելու պայմանով։ Բայց որպեսզի դատողությունս միայն իմս չլինի, ես կխնդրեմ Երվանդ Լալայանին, որ այդ մասին տեղեկություններ տա հայ պետական արխիվից։

Ես, կարծեմ, ամենայն խղճի մտոք բավարարություն տվի Ձեր կրակոտ հետաքրքրության, որ այնքան սիրելի է ինձ և մնում է, որ իմ անթիվ ջերմաջերմ ողջուններով հրաժեշտ տամ Ձեզ, իսկ Ձերոնց հայտնեմ իմ սրտագին հարգանքները։

Ձեր Ա. Բաբախանյան

8

Երևան, 4 ապրիլ, 1927

Սիրելի բժշկապետ

«Հրատապապես» պատասխանում եմ և Ձեր երկրորդ նամակին, և դարձյալ կետերով*, թեև նախկիններից շատերն արդեն սպառված են։

1. Ուղղագրական հանձնաժողովի տեղեկագիրը տպվում է։ Այնտեղ ես ունեմ մի զեկուցում, որի մեջ տալիս եմ նախկին ուղղագրական փորձերի պատմությունը։ Հույս ունեմ, որ Ձեզ կհետաքրքրե այդ տեսությունը։ 1913

* Ինչպես երևում է, հասցեատերը խնդրել է պատասխանել իր հարցերին կետերով։ Լեոն աշ բոլոր հարցերին է պատասխանել։

թվին Մանուկ Արեղյանը դարձյալ դրել էր ուղղադրական հարցեր, դրանց մեջ և 1-ն բառերի սկզբում և դրելու առաջարկութիւն։ Այս բանի դեմ սաստիկ բողոքել են Լրկու արարատցիներ—Դուք «Մշակի» մեջ և Հովհաննէս Հովհաննիսյանն՝ առանձին նամակով՝ ուղղված էջմիածնի հանձնաժողովին։ Ես իմ ղեկուցման մէջ հիշել եմ Ձեր անունը և բերել եմ մի կտոր Հովհաննիսյանի նամակից, որի մեջ ասում է թե 1-ի և 6-ի արտասանութեան տարբերութիւնը շէն զգում նրանք, ովքեր բուն Հայաստանցի չեն։ Տարաբախտաբար, իմ ղեկուցման այս մասը դեռ առանձին թերթով չի տպւել։ Ես ուղարկում եմ նրա առաջին 16 երեսները։ Եթե Դուք չեք ճանաչում Ձեր շատ մոտիկ բարեկամ Խորեն Ստեփանեի՞ դրական դեմքը, խնդրեմ կարդացեք, թե ինչ է նա արել ուղղադրութեան հարցի մեջ, և Դուք կտեսնեք, որ այսօրվա Մալխասյանն էլ, Արեղյանն էլ նրա աշակերտներն են։ Ավելացնեմ և այն, որ հանձնաժողովի քվարկութեամբ Ձեր սիրական 3-ն փրկված է. որոշված է դնել նրան բառերի սկզբում։

3. Հաղթատի մասին տեղեկացա Գարեգին Լեոնյանից, որ Հնագիտութեանց պաշտպանութեան կոմիտեն վերանորոգութեան նախահաշիվ է կազմել 6000 ռուբլու և ներկայացրել է կառավարութեան։ Ուրախալի է, իհարկե, միայն ...улыта едет, когда-то будет? Խոսեցի և Աշխարհբեգ Քալանթարի հետ։ Մեծ ոգևորութեամբ խոսեց Ձեր մասին, մի բան, որ իսկի ինձ չզարմացրեց, քանի որ Ձեր մասին ուրիշ կերպ խոսել չէր էլ կարելի, պատմեց, թե ինչպես եք Դուք բժշկել մեջքը, որ վնասվել էր Վանի ճանապարհին։ Խոսք բաց արի Մառի և Անիի մասին։ Ասաց, որ Մառն աշխատել է Ձեր ուզած ուղղութեամբ։ Բայց հաջողութիւն չի ունեցել։ Ես հարցրի, թե ինչպես նա կվերաբերվեր, եթե հայերից մեկը դիմեր նրան խնդրելով պահպանել Անիի հնութիւնները՝ ակադեմիայի միջոցով։ Նա պատասխանեց, թե այդ հարցն իր սրտին մոտ է, և նա սիրով կլսեր այդպիսի մի դիմում, թեև ի վիճակի չլիներ մի շոշափելի գործ կատարելու։ Ուրեմն, սիրելի բժշկապետ, սրեցեք Ձեր խոստուն գրիչը։ Ինչպես որ Դուք գիտեք և կարող եք։ Գրեցեք հայերեն, իսկ տեղեկութիւններ Անիի ներկա դրութեան մասին կբերեմ հետս։

7. Ես խնդրել էի Երվանդ Լալայանից տեղեկանալ պետական արխիվում Բարեգործական ընկերութեան արխիվի մասին։ Նա տեղեկացել է և անցյալ օր ինձ հարցրեց, թե ինքը կգրե Ձեզ։ Համենայն դեպս, այստեղ ևս կգրեմ նրա ասածները։ Բարեգործական ընկերութեան արխիվը գտնվում է այստեղ, պետական արխիվի այն բաժնում, որի վարիչն է Մեսրոպ նախկին քահանա Մելլանը։ Ես կրկնում եմ, այս անգամ արդեն Երվանդ Լալայանի խոսքերով, որ ոչ ոք չի համարձակվի տալ այդ ահագին արխիվը մասնավոր մարդկանց։ Մանավանդ Թիֆլիս փոխադրելու համար։ Ձեր վառ ցանկութիւնը նվիրական է և ինձ համար, քանի որ իր ժամանակին քո գրած վերջացրածը կլինի տասնամյակի պատմութիւն էլ, եթե չգրեր Զարմայրը (Դուք եք այդպես գրել Ձեր նամակում, երևի ուղեցել եք ասել Արամայիս)։ Մնում է մի միակ միջոց—գտնել այնքան փող, որ կարելի լինի այստեղ արտագրել տալ ամենակարևոր աղբյուրները և այնուհետև իսկական աշխատանքը փոխադրել Թիֆլիս։ Ձեր քարտուղարութեամբ։ Ձեր հիշած անձերից և ոչ մեկը չունի այնքան վարկ և հեղինակութիւն, որ կարողանա հնարավոր դարձնել անհնարին բանը։

Ձեզ և Ձերոնց ջերմաջերմ ողջույններ, նմանապես և Ձեր վարդենիների դրախտին:

Ձեր Լեո

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Դավթյան Ներսես—Բաքվի մարդասիրական ընկերության գրադարանի տնօրեն, հասարակական գործիչ:
2. Մ. Թադևոսյան, Վեպ վարսենկան սկայուհույ Աղվանից, ի հետքեանց հայրենեաց փոխեալ յարդի ոճ և դիր, Կալկաթայ, 1847:
3. Հովհաննես ք. Մկրյան, Կենսագրութիւն Մեսրոպ Թադևոսյանց, Թիֆլիս, 1886:
4. Լեո, Ղազարոս Աղայանց (Գրական գործունեության քառասունամյա հոբելյանի առթիվ), «Մշակ», 1902, № 105:
5. Մեսրոպ Դավթյան Թադևոսյանց, Վեպ վարդգեսի տն. Տուհաց, Կալկաթա, 1846:
6. Երիցյան Ալեքսանդր (1841—1902)—պատմաբան, բանասեր, խմբագիր: Բազմաթիվ հոդվածների և մենագրութիւնների հեղինակ: Խմբագրել է «Վաճառական», «Кавказские новости» պարբերականները:
7. Արեւիյան Ալեքսանդր (1858—1940)—դրամատուրգ, թատերական գործիչ (դերասան Լ. Արեւիյանի եղբայրը):

2

1. Երվանդ Շահազիզ (1856—1951)—բանասեր, հեղինակ մի շարք մենագրութիւնների և հոդվածների:
2. Արամ Վրույր (1863—1924)—նշանավոր դերասան, բանասեր: Գրել է «Պետրոս Աղամյան» (Մի համառոտ հայացք) աշխատութիւնը (Տիֆլիս, 1891):

3

1. Կանայան Ստեփան (1860—1937)—պատմաբան, բանասեր, պաշտոնավարել է Գևորգյան ճեմարանում, մասնակցել է «Պատմագիրք հայոց» մատենաշարի հրատարակմանը:
2. Ժակ դը Մորգան (1857—1924)—ֆրանսիացի արեւելագետ, հայագետ, պատմաբան և հնագետ, ունի բազմաթիվ հոդվածներ և մենագրութիւններ՝ նվիրված Հայաստանին և հայերին:
3. Նկատի ունի Մանուկ Արեւիյանին (1865—1944):
4. Խոսրը Գալուստ Տեր Մկրտչյանի՝ Մխարանի (1860—1913) մասին է:

4

1. Նկատի ունի իր որդուն՝ Գրիգոր Բաբախանյանին:
2. Ավդալբեգյան Թադևոս (1885—1937)—տնտեսագետ, հայագետ, հրապարակախոս, գրականագետ և թարգմանիչ:
3. Խաչիկ վ. Դադայան—եկեղեցական գործիչ, բանասեր և հնագետ, Զվարթնոցի առաջին պեղողը:

5

1. Նավասարդյան Բազրատ (1852—1934)—բժիշկ, լրագրող, հասարակական գործիչ:
2. Նազարյան Տիգրան (1858—1926)—հրապարակախոս, բանահավաք: Խմբագրել է «Տարազ», «Աղբյուր», «Լրաբեր» պարբերականները:

6

1. Մալխասյան Ստեփան (1857—1947)—հայագետ, թարգմանիչ, բառարանագիր:

7

1. Տեր-Մովսիսյան Մեսրոպ—հայագետ: Ունի մի շարք մենագրութիւններ և հոդվածներ հայ մատենագրության շուրջ:

2. Աղաբեզույան Մարկոս (1830—1908)—պատմաբան, հրապարակախոս։ «Կոունկ հայոց աշխարհին» և «Սիլին Ավարայրի» պարբերականների խմբագիրը։
3. Մամուրյան Մատթեոս (1830—1901)—հրապարակախոս, գրող, թարգմանիչ, ծնվել է Զմյուռնիայում, սովորել Փարիզում։ Հիմնել և խմբագրել է «Արեւելյան մամուլ» պարբերականը։ Բացակցել է «Նազիկ», «Մեղու», «Միություն» պարբերականներին։ «Հայկական նամականու» (1872) հեղինակը։
4. Մ. Մամուրյան, Անգլիական նամականի («Կոունկ հայոց աշխարհին», 1861, № 1, էջ 6—24)։
5. Մ. Մամուրյան, Անգլիական նամականի կամ հայու մը հակատագիրը, Զմյուռնիա, 1880։
6. Հովհաննիսյան Տիգրան (1865—1921) իրավաբան, քառասներ, թարգմանիչ, հասարակական գործիչ։

8

1. Նավասարդյանց Բ.—րմբկապետ, Իմ կարծիքը «Յ» տառի հնչման մասին («Մշակ», 1913, № 223)։
2. Հովհաննես Հովհաննիսյանի երկերի ժողովածուներում հիշյալ նամակը չի ապագրված։
3. Խորեն Ստեփանն (Ստեփանոս Ստեփանյան, 1840—1900)—պատմաբան, լեզվաբան, մանկավարժ։ Խմբագրել է «Հայկական աշխարհ», «Մանկավարժանոց» պարբերականները։ Աշխարհարար է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»։ Նամակագիրը նկատի ունի Խ. Ստեփաննի հետևյալ հոդվածները՝ «Հայկական ալբուրեն» («Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1870, № 2, էջ 42—46, № 3—4, էջ 77—80), «Նոր հայկական լեզվի քերականություն» (նույն տեղում, № 9—11, էջ 261—263), «Նոր հայկական լեզվի քերականություն» (նույն տեղում, № 2, էջ 37—38)։